

«Մամիկոնեանց եւ Կամսարականաց սերունդի մը այսպէս կը վայելէ լինիլ կամ այդպէս չի վայելէր»:

– Շատ բարի, որդեակ իմ,– ըսաւ մայրը ժպտելով,– կարծեմ թէ երեք օր մը ազատ կրնաս լինիլ մօրեղբօրդ ձեռքէն, դժբախտութիւն մը եթէ կայ, հոն է, որ մայրդ գբեզ ազատ պիտի չի թողու, երբ ամսուան մը հեռաւորութեամբ այնչափ կ'արօցոցեր է:

– Այդ դժբախտութիւնը դու լաւ գիտես, սիրելի մայր, թէ իմ երջանկութիւնս է:

Այս ըսելով Գրիգոր մօրը ձեռքը համբոյրներով կը ծածկեր, եւ հրկուքն էլ կը պատրաստուէին ելնելու, երբ ամրոցին մեծ դռան զարկը երեք անգամ բախեց: Գրեթէ կ'ես-գիշեր էր, մայր ու տղայ իրարու երես նայեցան եւ իրենց նայուածքը հարցական մ'էր թէ ո՞վ կրնար լինիլ այն ժամանակ եկողը:

Նոյն հարցմունքը կրկնուեցաւ նաեւ նոյն միջոցին վարը պահապանաց եւ զօրականաց սենեակներուն մէջ: Չաւեն անձնապահապետը, որ կօշիկները հանած՝ նստած տեղը մրափելով իր մարտողութիւնը կը կատարեր, ցատկեց շտկուեցաւ եւ իւր երկու խոր եւ փայլուն աչքերը դէպի դուռն սկսան նայիր Դուրսի մեծ դռան պահապաններուն ամենքը ուշ կը դնէին եկողին կամ եկողներուն հետ կը խոսէին: Չտուեն արագութեամբ սուրը գլխուն վրայէն յափշտակելով դուրս ելաւ եւ դուռը դիմեց:

– Բացէ՛ք, բացէ՛ք, իշխանն է, Յայոց զօրավարը, Թեոդորոս Ռշտունին,– կ'ըսեր դուրսէն ձայն մը:

– Այս ժամանակ ամրոցին դուռը չի բացուիր,– կը պատասխանէր դռնապանը,– ո՞վ կուզէ թող լինի: Վաղն առաւօտ լոյծս աչքով բարի եկաք, հազար բարով:

– Տէ՛, դուք հայ չէ՞ք, քրիստոնէայ չէ՞ք, Յայոց զօրավարը գիշերով դուրս կը ձգէք:

Այս վիճաբանութեան վրայ էին, երբ Չաւեն՝ դռնապանին քովն եկաւ եւ կամաց ձայնով քանի մը խօսք զրուցեց եւ մթութեան մէջ անհետ եղաւ: Նոյն միջոցին դուրսն էլ լռութիւն հաշորդեց:

Չտուեն շրջան մը ըրով բերդին քարաժայռին մէկ կողմը, գաղտնի փոքրիկ դռան մը գնաց եւ ամենայն զգուշութեամբ բացաւ. հոն պահապան մը դնելով ինք անշշունջ ելաւ դուրս եւ իջաւ վար նայելու համար թէ ի՞նչ մարդիկ էին